**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4**
**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/25» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՀ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան «13» 06. 2019թ.
ժամը $11^{00}$

Հանձնաժողովի նախագահ (գնահատող աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ))՝

-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պետ Հ. Մելիքյան,

գնահատողներ՝

- ՀՀ ԶՈՒ ԹՎ ՀՎ և Վ ծառայության պետ, գնդապետ Կ.Մխիթարյան,

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության իրային, ՎԲՆ, կուլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ Գ.Ուստյան:

Գնումները համակարգող՝

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ Տ.Աբրահամյան:

**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/25» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

---

(Տ.Աբրահամյան)

1. Մասնակիցների՝ ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող(նախատեսված) որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկայության և դրանց շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում կողմ 3, դեմ 0:

**1. Մասնակցի՝ ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող(նախատեսված) որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկայության և դրանց շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.**

---

(Տ.Աբրահամյան)

1.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/25» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին մասնակիցների համապատասխանությունը հավաստող փաստաթղթերն առկա են բացառությամբ ներքոհիշյալ դեպքերի՝

- Կենցաղային Քիմիայի գործարան ՍՊԸ կողմից վերոնշյալ փաստաթղթերը հրավերով սահմանված ժամկետում չեն ներկայացվել, սակայն ընկերության կողմից գրավոր վիճարկվել է այդ փաստը /ընկերությունը պնդում էր որ պահանջվող փաստաթղթերը ընթացակարգի քարտուղարի էլեկտրոնային փոստին ուղարկել է սահմանված ժամկետում՝ 04.06.2019թ/: Հաշվի առնելով մասնակցի գրությունը և ներկայացրած արտատպված /print screen/ փաստաթուղթը, գնահատող հանձնաժողովը որոշեց կասեցնել նիստը և դիմել ՀՀ ԶՈՒ կապի վարչություն՝ տրամադրել տեղեկատվություն, արդյոք 2019 թվականի հունիսի 4-ից հունիսի 6-ը ընկած ժամանակահատվածում ՀՀ ՊՆ mail.mil.am սերվերում bitxim.g@gmail.com էլեկտրոնային փոստի հասցեից t.abrahamyan@mil.am էլեկտրոնային փոստի հասցեին ուղղված նամակ գրանցվել է, թե՝ ոչ:ՀՀ ԶՈՒ կապի վարչության 14.06.2019թ ե/փ ելք 1242/ԿՎ գրության համաձայն 2019 թվականի հունիսի 4-ից հունիսի 6-ը ընկած ժամանակահատվածում ՀՀ ՊՆ mail.mil.am սերվերում bitxim.g@gmail.com էլեկտրոնային փոստի հասցեից t.abrahamyan@mil.am էլեկտրոնային փոստի հասցեին ուղղված նամակ չի ուղարկվել, այլ ուղարկվել է 07.06.2019թ: Հիմք ընդունելով ՀՀ ԶՈՒ կապի վարչության գրությունը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել Կենցաղային Քիմիայի գործարան ՍՊԸ-ի հայտը, քանի որ վերջինս որակավորման փաստաթղթերը ընթացակարգի հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացրել:

-Ժակ և Գոռ ՍՊԸ-ն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացրել որակավորման փաստաթղթերը, սակայն գրությամբ տեղեկացրել է, որ սահմաված ժամկետում ներկայացրել է պահանջվող փաստաթղթեր: Գնահատող հանձնաժողովի որոշմամբ գրություն է ուղարկվել ՀՀ Զու կապի վարչություն՝ տրամադրել տեղեկատվություն, արդյոք 2019 թվականի հունիսի 4-ից հունիսի 6-ը ընկած ժամանակահատվածում ՀՀ ՊՆ mail.mil.am սերվերում saturn90@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեից t.abrahamyan@mil.am էլեկտրոնային փոստի հասցեին ուղղված նամակ գրանցվել է, թե՝ ոչ: ՀՀ ԶՈՒ կապի վարչության 17.06.19թ ելք ե/փ 1254/ԿՎ գրության համաձայն Ժակ և Գոռ

ՍՊԸ-ն 2019 թվականի հունիսի 4-ից հունիսի 6-ը ընկած ժամանակահատվածում saturn90@mail.ru էլեկտրոնային հասցեից t.abrahamyan@mil.am հասցեին ուղարկվել է մեկ վիրուսակիր նամակ, որով ուղարկված փաստաթղթերը պահպանվել են mil.am սերվերում և գրությանը կից հանձնաժողովին տրամադրվել է վերոնշյալ փաստաթղթերը: Գնահատող հանձնաժողովը, ուսումնասիրելով տվյալ փաստաթղթերը, որոշեց ժակ և Գոռ ՍՊԸ որակավորման փաստաթղթերը գնահատել հրավերի պայմաններին համապատասխանող:

-Մոսէսքո ՍՊԸ կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերի մաս կազմող տեխնիկական բնութագրում 2-րդ, 6-9-րդ և 12-րդ չափաբաժինների մասով նշված են համապատասխանաբար / ԳՕՍՏ 6794-75 կամ արտադրող գործարանի համարժեք ՏՊ/, / Միջազգ. ստանդարտով ՍԱԵ-80W90 կամ համարժեք/, /ՏՊ 38.1011280-89 կամ արտադրող գործարանի համարժեք ՏՊ/, / ՏՊ 38.1011232-89 կամ արտադրող գործարանի համարժեք ՏՊ/, / ՕՍՏ 3801281-82 կամ արտադրող գործարանի համարժեք ՏՊ/, / ՏՊ 2229-009-17361162-2001 կամ արտադրող գործարանի համարժեք ՏՊ/, այնինչ անհրաժեշտ է հստակեցնել վերը նշված բնութագրիչները, բացառելով **կամ համարժեք** բառերը, ինչպես նաև մասնակցի ներկայացրած նմանատիպ պայմանագրի մաս կազմող համաձայնագիր N 2-ը, այդ համաձայնագրի թվով երկու հաշիվ-ապրանքագրերը և նմանատիպ պայմանագրին կից N 1 համաձայնագրի թվով մեկ հանձնման-ընդունման արձանագրությունը բացակայում են: Գնահատող հանձնաժողովի որոշմամբ նիստը կասեցվեց և առաջարկվեց մասնակցին շտկելու վերոնշյալ անհամապատասխանությունները:

Քանի որ 07.06.2019թ. ստացվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացությունը՝ հանձնաժողովը որոշեց մասնակիցների ներկայացրած հայտարարությունները համարել իրականությանը համապատասխանող:

1.2. Քանի որ Կենցաղային Քիմիայի գործարան ՍՊԸ հայտը ընթացակարգի 10-րդ և 11-րդ չափաբաժինների մասով մերժվել է, գնահատող հանձնաժողովի որոշմամբ 10-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչվեց Յույս-Մոտոր ՍՊԸ-ն, իսկ 11-րդ չափաբաժնի մասով՝ Մոսէսքո ՍՊԸ-ն:

1.3 20..06.2019թ Հանձնաժողովը որոշեց հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/25» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման փաստաթղթերին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

1.4 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած Յույս-Մոտոր ՍՊԸ-ի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

**2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

-----------------------------------------------------------------------------------------------------

(Տ.Աբրահամյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/25» ծածկագրով ընթացակարգի նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից հրավերով նախատեսված որակավորման փաստաթղթերին համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից ամփոփման վերջնաժամկետի օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 11:00-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

| | |
|---|---|
| Գնահատող | Հ.Մելիքյան |
| Գնահատող | Կ. Մխիթարյան |
| Գնահատող | Գ. Ռաշոյան |
| Գնումների համակարգող | Տ.Աբրահամյան |